



## ՄԱՐԻԱՄ ԿՈՏՈՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության  
ամբիոնի ասպիրանտ

### ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ

Տնտեսական անվտանգությունը յուրաքանչյուր երկրի ազգային անվտանգության անբաժանելի մասն է: Ներկայում այն դարձել է ցանկացած հասարակության սոցիալ-տնտեսական, քաղաքական և ազգային կայունության հիմքը: Համաշխարհային տնտեսության ու քաղաքականության մեջ պետության դիրքը, նրա տնտեսական և ռազմաքաղաքական հզորությունը որոշվում են տնտեսական անվտանգության մակարդակով, ավելին՝ տնտեսական անվտանգությունը պետության անկախության և ինքնիշխանության երաշխիքն է: Որպես տնտեսական անվտանգության լրջագույն սպառնալիք էապես կարևորվում է ստվերային տնտեսության կրճատման հիմնախնդիրը: Ստվերի դեմ պայքարը ներկայում խիստ անհրաժեշտ և անհետաձգելի է դարձել մասնավորապես Հայաստանի Հանրապետության համար:

**Հիմնաբառեր.** ստվերային տնտեսություն, տնտեսական անվտանգություն, ներքին սպառնալիքներ, արտաքին սպառնալիքներ, գործոններ, ԱՄՀ զեկույց

JEL: F52, H70, O52

Սկսած 20-րդ դարի երկրորդ կեսից՝ համաշխարհային տնտեսության մեջ տեղի են ունենում այնպիսի արմատական փոփոխություններ, որոնք բնորոշվում են տնտեսական, տեղեկատվական, տեխնոլոգիական, քաղաքական և միասնացման գործընթացների արագացմամբ ու համընդհանրացմամբ: Ստեղծված իրավիճակում ազգային, մասնավորապես՝ տնտեսական անվտանգության ամրապնդման խնդիրը օրհասական է դառնում ինչպես

առանձին, այնպես էլ տարածաշրջանային ռազմավարություն որդեգրած երկրների համար: Տնտեսական անվտանգության հնարավոր սպառնալիքների բացահայտումը, դրանց վնասագերծման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների մշակումն ու իրականացումը առաջնահերթ նշանակություն ունեն երկրի տնտեսական անվտանգության ապահովման համար: Տնտեսական անվտանգության այդպիսի սպառնալիքներից է ստվերային տնտեսությունը:

Ստվերային տնտեսությունն օբյեկտիվորեն գոյություն ունեցող և շուկայական տնտեսությունում մշտապես վերարտադրվող համակարգ է, որտեղ տնտեսավարող սուբյեկտներն իրենց տնտեսական գործունեությունն իրականացնում են հակաօրինական ճանապարհով: Ստվերային տնտեսական գործունեությունից ստացված արդյունքները տասնյակ անգամ գերազանցում են օրինական տնտեսական գործունեության արդյունքները, սակայն ստվերի կոնկրետ մասշտաբները որոշելն անհնար է: Այս տեսանկյունից յուրաքանչյուր պետության առաջնային խնդիրն է համարվում խորապես ուսումնասիրել ստվերային տնտեսության էությունը, մասնավորապես՝ առաջացման պատճառները, դրսևորման տեսակները, դրանց ազդեցությունը թե՛ պետության ընդհանուր վիճակի, թե՛ բնակչության կենսամակարդակի վրա, հեռանկարային քայլեր ձեռնարկել՝ հնարավորինս կրճատելու ստվերի մակարդակը:

Ստվերային տնտեսության վերաբերյալ մեկ միասնական սահմանում չկա: Առավել տարածված սահմանումներից մեկի համաձայն՝ ստվերային տնտեսությունը չգրանցված տնտեսական գործունեության բոլոր այն տեսակներն են, որոնց հաշվառման դեպքում դրանք կներառվեն համախառն ազգային արդյունքի մեջ<sup>1</sup>: Առնչակից խնդիրների հստակ պատկերացման համար անհրաժեշտ է առանձնացնել դրա հիմնական տեսակները: Ստվերային տնտեսության դասակարգման հիմքում այն գաղափարն է, թե ստվերային տնտեսական գործունեության տվյալ տեսակը որքանով է առնչվում «սպիտակ» («առաջնային», պաշտոնական) տնտեսության հետ<sup>2</sup>: Համաձայն վերոնշյալի՝ տարբերակում են ստվերային տնտեսության հետևյալ տեսակները.

- «Երկրորդային» («սպիտակօձիքավոր») ստվերային տնտեսություն,
- «գորշ» (ոչ ֆորմալ) ստվերային տնտեսություն,
- «սև» («ընդհատակյա») ստվերային տնտեսություն:

«Երկրորդային» («սպիտակօձիքավոր») ստվերային տնտեսությունն օրենքով արգելված գործունեություն է, որի հիմնական նպատակն ազգային եկամտի վերաբաշխումն է: Այսպիսի գործունեությամբ հիմնականում զբաղվում են «պաշտոնատար անձինք», ըստ այդմ՝ ստվերային տնտեսության այս տեսակն անվանվում է նաև «սպիտակօձիքավոր»: «Երկրորդային» ստվերային տնտեսական գործունեության ընթացքում նոր արտադրանք չի թողարկվում, և ոչ մի նոր ծառայություն չի մատուցվում: Ստվերային գործունեությունից ստացված եկամուտն օգտագործվում է բնակչության մի խավի կողմից՝ ի հաշիվ մյուսների:

<sup>1</sup> Տե՛ս **Schneider F., Williams C.C.**, The Shadow Economy, Institute of Economic Affairs, 2013, էջ 23:

<sup>2</sup> Տե՛ս **Латов Ю.В., Ковалев С.Н.**, Теневая экономика, учебное пособие для вузов, М., Норма, 2006, էջ 14:

Ընդհանուր առմամբ, «երկրորդային» ստվերային տնտեսությունն ունի հետևյալ պատկերը.

- ստվերային տնտեսական գործունեության այս տեսակի սուբյեկտներն են հասարակության «արժանապատիվ» դասի և գործարար միջավայրի ներկայացուցիչները, այդ թվում՝ պաշտոնատար անձինք, տնտեսավարող սուբյեկտները,

- սուբյեկտները հանցավոր գործունեություն են իրականացնում. վարում են օրինական ֆինանսատնտեսական քաղաքականություն՝ դրանով քողարկելով իրենց հանցավոր գործունեությունը,
- հանցագործությունները կատարվում են առանց բռնության՝ օգտագործելով տնտեսական մեթոդները, պաշտոնական դիրքը և իրավաօրենսդրական դաշտի բացթողումները,
- տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում իրականացվող տնտեսական հանցագործությունները բնորոշվում են կազմակերպվածության բարձր մակարդակով,
- տնտեսական հանցագործությունները կատարվում են առավել առաջադեմ տեխնոլոգիաների կիրառմամբ՝ ներառյալ համակարգչային տեխնիկան և հեռահաղորդակցությունը: Ընդ որում, այդ նույն տեխնիկան թույլ է տալիս քողարկել այն միջոցները, որոնցով կատարվում են հանցագործությունները:

«Գորշ» (ոչ ֆորմալ) ստվերային տնտեսությունը այնպիսի տնտեսական գործունեություն է, որը զբաղվում է օրենքով թույլատրված ապրանքների արտադրությամբ և ծառայությունների մատուցմամբ՝ խուսափելով պետական հաշվառումից: Այս հատվածի տնտեսավարող սուբյեկտները միտումնավոր կերպով հրաժարվում են օրենքով սահմանված հարկերի և այլ պարտադիր վճարումների, ինչպես նաև պարտավորությունների կատարումից:

Ոչ ֆորմալ տնտեսությանը բնորոշ են՝

- շուկա մուտք գործելու դյուրինությունը,
- սեփական ռեսուրսներին ապավինելը,
- ձեռնարկությունների ընտանեկան սեփականությունը,
- փոքրածավալ գործունեությունը,
- արդյունավետ և ճկուն տեխնոլոգիաները,
- ֆորմալ կրթական համակարգից դուրս ծեռք բերված հմտությունները, շուկաների մրցակցությունն ու չկարգավորվածությունը<sup>3</sup>:

«Սև» («ընդհատակյա») ստվերային տնտեսությունը (կազմակերպված հանցավորության տնտեսությունը) անօրինական տնտեսական գործունեություն է, որը զբաղվում է օրենքով արգելված ապրանքների արտադրությամբ և ծառայությունների մատուցմամբ, ինչպես նաև՝ վաճառքով<sup>4</sup>. Օրինակ՝ թմրանյութերի, դեղամիջոցների, զենքի, ալկոհոլի ապօրինի արտադրությունն ու վաճառքը: Սակայն այս տեսակի ստվերային տնտեսության շրջանակներում կազմակերպվող գործողություններն իրականացվում են նաև առանց արտադրություն կազմակերպելու, որոնք գերշահույթ են ապահովում ստվերային տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին (օրինակ՝ կողոպուտ, շորթում, մարմնավաճառություն և այլն):

<sup>3</sup> Տե՛ս **Наумов Ю.Г., Латов Ю.В.**, Экономическая безопасность и теневая экономика, учебник. М., Академия управления МВД России, 2016, էջ 158:

<sup>4</sup> Տե՛ս **Латов Ю.В.**, Экономика вне закона (Очерки по теории и истории теневой экономики). М., Московский общественный научный фонд, 2001, էջ 7:

*Գրականության ակնարկ:* Այս հոդվածի նյութը պատրաստելու համար օգտագործվել են ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրյա մասնագիտական գրականության աղբյուրներ (մենագրություններ, դասագրքեր, ամսագրեր, հոդվածներ): Հայրենական մասնագիտական գրականության մեջ ստվերային տնտեսության հիմնախնդրին անդրադարձած հեղինակներից է տ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Մարկոսյանը: Մասնավորապես, «Տնտեսական անվտանգության հիմնախնդրները. մեթոդաբանություն և արդյունքներ» աշխատությունում հեղինակը տնտեսական անվտանգության սպառնալիքների մեջ էապես կարևորում է ստվերային տնտեսությունը՝ նշելով, որ վերջինս համարվում է «Տնտեսական զարգացումը խոչընդոտող լրջագույն գործոն: Ստվերային տնտեսության առկայությունը պայմանավորված է ընդհանուր սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակով, պետական կարգավորման ցածր արդյունավետությամբ, կոռուպցիայով: Ընդ որում, վերջինիս հետ ստվերային տնտեսությունը գտնվում է փոխադարձ կապի մեջ:

Ռուս հեղինակներ Յու. Լատովը և Ս. Կովալևն իրենց «Ստվերային տնտեսություն» աշխատությունում նշում են, որ ստվերային տնտեսության զարգացումն ուղղակիորեն կապված է պետական կարգավորման հետ: Կարգավորումն անհնար է առանց սահմանափակումների, և անհիմն սահմանափակումները հիմք են հանդիսանում, որպեսզի դրանք խախտվեն. հատկապես, եթե դա ձեռնտու է: Ստվերային տնտեսության շատ տեսակներ (օրինակ՝ հարկերից խուսափումը) հիմնականում բացատրվում են պետական կարգավորման թերություններով՝ կառավարման բյուրոկրատացում, չափազանց բարձր հարկեր և այլն: Այնուամենայնիվ, նույնիսկ լավագույն կենտրոնացված կառավարման համակարգը չի կարող վերացնել ստվերային տնտեսությունը, այլ կարող է միայն կրճատել վերջինիս չափերը: Եվ ամենանվազ չափերով հարկ վճարողների որոշ մասն այս դեպքում նույնպես անպայման խուսափելու է դրանց վճարումից:

Այլ հեղինակներ՝ Գ. Կրոխիչևան, Է. Արխիպովը, Ա. Ոսկանովան և Դ. Իվանչուկն իրենց համատեղ «Ստվերային տնտեսությունը տնտեսական անվտանգության համակարգում» հոդվածում նշում են, որ ներկայում երկրի տնտեսական անվտանգության համակարգում ստվերային տնտեսությունը բավականին արդիական և հրատապ լուծումներ պահանջող հիմնախնդիր է: Ընդ որում, ստվերային տնտեսությունն ինքնին սպառնալիք է համարվում երկրի տնտեսական աճի, ներդրումների և նորարարական գործընթացների, զուտ մրցակցության, շուկայական արդյունավետ հարաբերությունների, աշխատուժի վերարտադրողականության պայմանների համար:

Այժմ անդրադառնանք ստվերային տնտեսության սպառնալիքներին, որոնք բնույթով լինում են ներքին և արտաքին: Ներքին սպառնալիքներն իրենց հերթին տարանջատվում են իրական հատվածի, սոցիալական և նորարարության ոլորտների սպառնալիքների<sup>5</sup>: Արտաքին սպառնալիքները լինում են տնտեսական և քաղաքական:

Իրական հատվածում ստվերային տնտեսությունը կարող է հանգեցնել արտադրության անկման, օրինական մասնակիցների հիմնական միջոցների կորստի, ինչպես նաև, տնտեսավարող սուբյեկտների անօրինական գործունեության հետևանքով, շուկաների կորստի:

<sup>5</sup> См. **Макарык А.В.**, Проблема теневой экономики в контексте обеспечения национальной финансовой безопасности, Приволжский научный вестник, № 5 (21), 2013:

Սոցիալական ոլորտի սպառնալիքները ասելով կարելի է հասկանալ սոցիալական անհավասարությունը, երբ տեղի է ունենում հասարակության եկամուտների վերաբաշխում՝ համեմատաբար փոքր՝ «արտոնյալ» խմբերի միջև, ինչն իր հերթին նվազեցնում է հասարակական բարեկեցությունը՝ իր հետ բերելով սոցիալ-տնտեսական լուրջ հետևանքներ: Հաջորդը գործազրկության մակարդակի բարձրացումն է, որը հանցագործությունների թվի ավելացման պատճառ է դառնում:

Սորարարության ոլորտի սպառնալիքներին բնորոշ է ստվերային տնտեսության և անարդար մրցակցային դաշտի առկայության պայմաններում ներդրումների նվազումը: Ուստի, երկրում ներդրումային միջավայրի գրավչությունն ապահովելու նպատակով, անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ պայմաններ՝ ներքին ներդրումները խթանելու, օտարերկրյա ներդրումների հոսքն ավելացնելու համար: Կարծում ենք՝ վերոնշյալն առավել արդիական և հրատապ է Հայաստանի Հանրապետության ներկայիս մարտահրավերների պայմաններում:

Ստվերային տնտեսության արտաքին սպառնալիքները լինում են տնտեսական՝ արտարժույթի արտահոսք, արտաքին պարտքի աճ, արտաքին շուկաների կորուստ, տնտեսական հարաբերությունների քրեականացում, ինչպես նաև քաղաքական՝ կառավարման մարմինների կողմից ստվերում գործող տնտեսավարող սուբյեկտների շահերի լոբբինգ, անջատողական տրամադրությունների ամրապնդում ստվերային տնտեսության բարձր համակենտրոնացվածություն ունեցող շրջաններում: Նմանատիպ սպառնալիքներ այսօր առկա են ՀՀ-ում, որը խիստ մտահոգիչ է:

Ընդհանուր առմամբ, տնտեսական անվտանգության համակարգում ստվերային տնտեսության զարգացմանը նպաստում են հետևյալ գործոնները՝

### 1. Ֆինանսատնտեսական.

- հարկային համակարգի անկատարությունը (հարկային անհամաչափությունները, օրենսդրության բարդությունը, շահույթի էֆեկտի և պատժի ազդեցության հարաբերակցությունը),
- բյուջետային միջոցների լայնածավալ յուրացումը (դրանց ինչպես ուղղակի, այնպես էլ աննպատակահարմար և անօրինական օգտագործումը),
- ֆինանսական համակարգի հնամենի (արխաիկ) կառուցվածքը:

### 2. Իրավական.

- օրենսդրության մեջ առկա հակասություններն ու բացթողումները,
- օրինագծերի և օրենքների համար լոբբիստական գործունեությունը,
- իրավապահ և դատական մարմինների թույլ, կոռումպացված համակարգը,
- շահերի բախման և գործերի անուղղակի իրավասության հետևանքով կազմակերպված հանցավորության դեմ համակարգային պայքարի պետական ծրագրի ոչ պատշաճ իրականացումը,
- մասնավոր բիզնեսի անբավարար պաշտպանվածությունը արտաքին միջամտություններից և հակշտակումից:

### 3. Վարչական.

- բյուրոկրատական ընթացակարգերի բարդությունը և դրանց ոչ կենսունակությունը (ցածր արդյունավետությունը),

- քաղաքացիների դիմումներին առնչվող ինստիտուտի թերզարգացածությունը,
- վարչական ապարատի որոշումների նկատմամբ անբավարար հետաքրքրությունը, ինչպես նաև դրանց աղետալի սխալների համար աննշան պատասխանատվությունը:

#### 4. Հասարակական-քաղաքական.

- անկայուն շուկայական իրավիճակը, որը հանգեցնում է կայուն զարգացման, ինչպես նաև ներդրողների և ձեռնարկատերերի պատշաճ գաղափարախոսության բացակայությանը,
- բյուջետային կազմակերպությունների աշխատողներին վճարովի աշխատանքի համար անհամապատասխան վարձատրության հետևանքով մշակույթի աստիճանական վատթարացումը,
- օրինական տնտեսական գործունեության մեջ վարձու աշխատողների սոցիալական ապահովվածության ցածր մակարդակը. սա հանգեցնում է ստվերային տնտեսությանն անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների ձևավորմանը<sup>6</sup>:


Որպես ՀՀ տնտեսական անվտանգության սպառնալիք էապես կարևորվում է ստվերային տնտեսության կրճատման հիմնախնդիրը: Այս տեսակետից առանձնացվում է միջազգային կազմակերպությունների հրապարակած պաշտոնական տեղեկատվությունը, մասնավորապես՝ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից 2018 թ. հունվարին հրապարակված «Ստվերային տնտեսություններն աշխարհում. ի՞նչ ենք մենք սովորել վերջին 20 տարիների ընթացքում» (Shadow Economies Around the World: What Did We Learn Over the Last 20 Years?) զեկույցը, որում լայնածավալ հետազոտություն է կատարվել ստվերային տնտեսության առկա և նոր գնահատման մեթոդների վերջին զարգացումների վերաբերյալ<sup>7</sup>: Հետազոտության մեջ արտացոլված են 158 երկրի ստվերային տնտեսության գնահատման նոր արդյունքները 1991-2015 թթ. ընթացքում:

*Մեթոդաբանություն:* Հիմք ընդունելով զեկույցում կատարված հետազոտությունը՝ ստորև ներկայացված է ՀՀ ստվերային տնտեսության մակարդակ/ՀՆԱ(%) հարաբերակցությունը 1991-2015 թթ.: 2015 թ. ՀՀ ստվերային տնտեսությունը կազմել է ՀՆԱ-ի 35,96%-ը: Կատարված քանակական վերլուծության համաձայն՝ Հայաստանի այս ցուցանիշը Հարավային Կովկասի երկրների շարքում ամենացածրն է: 2015 թ. տարածաշրջանում ստվերային տնտեսության ամենաբարձր ցուցանիշը Վրաստանինն է՝ 53%, ապա Ադրբեյջանինը՝ 43,6%: ԱՄՀ զեկույցի համաձայն՝ ստորև ներկայացված է ՀՀ ստվերային տնտեսությունը 1991-2015 թթ.:

Ըստ գծապատկեր 1-ի ժամանակագրական շարքի՝ Հայաստանում ստվերի առավելագույն մակարդակն արձանագրվել է 1992 թ.՝ ՀՆԱ 49,5%, ամենացածրը՝ 2013 թ.՝ 34,56%: ՀՀ-ում ստվերի մակարդակի կտրուկ աճ է գրանցվել ձգնաժամային 2009 թ.՝ 2008 թ. 35,39%-ից հասնելով 41,04%-ի: Այնուհետև որոշ ժամանակ ստվերայնությունը նվազել է, սակայն 2015 թ. աճել՝ հասնելով 35,96%-ի:


<sup>6</sup> Տե՛ս **Крохичева Г.Е., Архипов Э.Л., Восканова А.С., Иванчук Д.А.**, Теневая экономика в системе экономической безопасности. Интернет-журнал «НАУКОВЕДЕНИЕ», том 8, №2, 2016:

<sup>7</sup> Տե՛ս **Medina L., Schneider F.**, Shadow Economies Around the World: What Did We Learn Over the Last 20 Years?, IMP Working Paper, № 18/17, January 24, 2018:



Պատկեր 1. ՀՀ ստվերային տնտեսության մակարդակը/ՀՆԱ (%), 1991-2015 թթ.<sup>8</sup>

Եթե փորձենք 1991-2015 թթ. ժամանակահատվածում ՀՀ ստվերային տնտեսության միջինացված ցուցանիշները համեմատել ԱՊՀ երկրների միջինացված ցուցանիշների հետ (գծապատկեր 2)<sup>9</sup>, ապա կտեսնենք, որ Հայաստանն այս երկրների շարքում միջին դիրք է զբաղեցնում: Ստվերային տնտեսության մակարդակի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Ադրբեյջանում:



Պատկեր 2. 1991-2015 թթ. ԱՊՀ երկրների ստվերային տնտեսության մակարդակը/ՀՆԱ (%)<sup>10</sup>

<sup>8</sup> Պատկերները կազմել է հեղինակը՝ ըստ ԱՄՀ զեկույցի (Leandro Medina; Friedrich Schneider, Shadow Economies Around the World: What Did We Learn Over the Last 20 Years?, IMP Working Paper № 18/17, January 24, 2018):

<sup>9</sup> Չեկույցում ԱՊՀ երկրներից թուրքմենստանի և Ուզբեկստանի ստվերային տնտեսության մակարդակների վերաբերյալ գնահատումներ չկան:

<sup>10</sup> Պատկերները կազմել է հեղինակը՝ ըստ ԱՄՀ զեկույցի (Leandro Medina; Friedrich Schneider, Shadow Economies Around the World: What Did We Learn Over the Last 20 Years?, IMP Working Paper № 18/17, January 24, 2018):

Կատարված հետազոտությունների համաձայն՝ ներկայացված 158 երկրների շարքում 1991-2015 թթ. ստվերային տնտեսության ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Բոլիվիայում՝ 62,3%, ամենացածրը՝ Շվեյցարիայում՝ 7,2%<sup>11</sup>:

*Եզրակացություն:* Այսպիսով կարելի է եզրակացնել, որ ստվերային տնտեսությունն օբյեկտիվորեն գոյություն ունեցող և շուկայական տնտեսությունում մշտապես վերարտադրվող համակարգ է, որտեղ տնտեսավարող սուբյեկտներն իրենց տնտեսական գործունեությունը ծավալում են հակաօրինական ճանապարհով: Նման տնտեսական գործունեությունն իրականացվում է ստվերային տնտեսության հետևյալ երեք տեսակների միջոցով.

- «երկրորդային» («սպիտակօձիքավոր») ստվերային տնտեսություն, որն օրենքով արգելված գործունեություն է, որի հիմնական նպատակն ազգային եկամտի վերաբաշխումն է,
- «գորշ» (ոչ ֆորմալ) ստվերային տնտեսություն, որը զբաղվում է օրենքով թույլատրված ապրանքների արտադրությամբ և ծառայությունների մատուցմամբ՝ խուսափելով պետական հաշվառումից,
- «սև» («ընդհատակյա») ստվերային տնտեսություն, որը զբաղվում է օրենքով արգելված ապրանքների արտադրությամբ և ծառայությունների մատուցմամբ, ինչպես նաև՝ վաճառքով:

Ստվերային տնտեսությունը լրջագույն սպառնալիք է համարվում երկրի տնտեսական անվտանգության համար: Այդ սպառնալիքները բնույթով լինում են ներքին ու արտաքին և կարող են հանգեցնել այնպիսի սոցիալ-տնտեսական խնդիրների առաջացման, ինչպիսիք են արտադրության անկումը, սոցիալական անհավասարությունը, անարդար մրցակցային դաշտի առկայությունը, ներդրումների նվազումը, արտարժույթի արտահոսքը, արտաքին պարտքի աճը, տնտեսական հարաբերությունների քրեականացումը: Ընդ որում, վերոնշյալ սպառնալիքների դեմ պայքարը արդիական և հրատապ է համարվում Հայաստանի Հանրապետության համար:

ԱՄՀ զեկույցի համաձայն՝ 2015 թ. ՀՀ ստվերային տնտեսությունը կազմել է ՀՆԱ-ի 35,96%-ը: Հայաստանն այս ցուցանիշով Հարավային Կովկասի երկրների շարքում 2015 թ. ամենացածր ստվերային տնտեսության մակարդակ ունեցող երկիրն է համարվել, իսկ 1991-2015 թթ. ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունը ստվերային տնտեսության միջինացված ցուցանիշներով ԱՊՀ երկրների շարքում միջին դիրք է զբաղեցրել:

*Առաջարկություններ և մեկնաբանություններ:* Հայաստանի Հանրապետության՝ 2015 թ. ստվերային տնտեսության մակարդակը, իհարկե, որոշ առումներով հուսադրող է եղել, սակայն չպետք է սահմանափակվել՝ ստվերային տնտեսության ամենացածր մակարդակն ունեցող երկիրը լինելով միայն Հարավային Կովկասում: Դրան է միտված ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախաձեռնությամբ մշակված 2020-2024 թթ. ռազմավարական զարգացման ծրագրի նախագիծը: Մասնավորապես, ռազմավարության շրջանակներում առանձնացված հինգ ռազմավարական նպատակներից երկրորդը վերաբերում է վարչարարության արդյունավետության բարձրացմանը, եկամուտների ավելացմանը և ստվերի կրճատմանը: Բացի դրանից, սույն թվականի հուլիսի 9-ին պետական եկամուտների կոմիտեի և «Էքսպեր-

<sup>11</sup> St'iu **Medina L., Schneider F.**, Shadow Economies Around the World: What Did We Learn Over the Last 20 Years?, IMP Working Paper № 18/17, January 24, 2018:



տիզ Ֆրանս» Ֆրանսիայի միջազգային փորձագիտության գործակալության միջև խորհրդատվական ծառայության պայմանագիր է կնքվել՝ ՊԵԿ-ում «Աջակցություն Հայաստանի հարկային վարչարարությանը՝ ստվերային տնտեսությունը կրճատելու և հարկային եկամուտների կայուն աճն ապահովելու գործում» տեխնիկական օժանդակության ծրագրի իրագործման նպատակով: Ծրագիրը կոչված է օժանդակելու հարկային ոլորտում ՀՀ ՊԵԿ-ի ռազմավարության ներդրմանը՝ շեշտը դնելով ստվերային տնտեսության կրճատմանն ուղղված միջոցառումների վրա: Ֆրանսիական կողմը ներգրավելու է ստվերային տնտեսության դեմ պայքարի առաջավոր փորձին տիրապետող միջազգային փորձագետների՝ ՊԵԿ-ի համար արդյունավետ առաջարկություններ մշակելու նպատակով: Մեկուկես տարի տևողությամբ ծրագրի ավարտին ակնկալվում է ՊԵԿ-ում ներդնել ստվերային տնտեսության և տնտեսության ճյուղերի հարկային ներուժի գնահատման արդյունավետ գործիքներ, ուժեղացնել ՊԵԿ-ի կարողությունները՝ ներքին և արտաքին տեղեկատվության համախմբման և վերլուծության գործում: Եվ քանի որ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի առաքելություններից մեկը ՀՀ տնտեսական անվտանգությանը նպաստելն է, հետևաբար, ստվերային տնտեսության կրճատմանն ուղղված ռազմավարական նպատակների իրագործումը ինքնին կհանգեցնի երկրում տնտեսական անվտանգության ապահովմանը:

Վերոշարադրյալից ելնելով՝ կարծում ենք, որ ստվերային տնտեսության աճին հակազդելու համար անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել վերը նշված՝ տնտեսական անվտանգության համակարգում ստվերային տնտեսության զարգացումը խթանող, գործոնային խմբերի համալիր ուսումնասիրության, վերլուծության և համապատասխան միջոցառումների ձեռնարկման վրա, ինչը կնպաստի երկրում տնտեսական անվտանգության ամրապնդմանը: Ստվերային տնտեսության կրճատումը կհանգեցնի պետական բյուջեի հարկային եկամուտների աճին, ինչպես նաև, պետբյուջեի ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարման պարագայում՝ մի շարք սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը:

### Օգտագործված գրականություն

1. Крохичева Г.Е., Архипов Э.Л., Восканова А.С., Иванчук Д.А., Теневая экономика в системе экономической безопасности, Интернет-журнал «НАУКОВЕДЕНИЕ», том 8, №2, 2016.
2. Латов Ю.В., Ковалев С.Н., Теневая экономика, учебное пособие для вузов, М., Норма, 2006.
3. Латов Ю.В., Экономика вне закона: очерки по теории и истории теневой экономики. М., Московский общественный научный фонд, 2001.
4. Макарюк А.В., Проблема теневой экономики в контексте обеспечения национальной финансовой безопасности, Приволжский научный вестник, № 5 (21), 2013.
5. Наумов Ю.Г., Латов Ю.В., Экономическая безопасность и теневая экономика, учебник, М., Академия управления МВД России, 2016.
6. Medina L., Schneider F., Shadow Economies Around the World: What Did We Learn Over the Last 20 Years?, IMP Working Paper, № 18/17, January 24, 2018.
7. Schneider F., Williams C.C., The Shadow Economy, Institute of Economic Affairs, 2013.

**МАРИАМ КОТОЯН***Аспирант кафедры экономической теории АГЭУ*

***Теневая экономика как угроза экономической безопасности.*** – Экономическая безопасность является неотъемлемой частью национальной безопасности каждой страны. В настоящее время экономическая безопасность стала основой социально-экономической, политической и национальной стабильности любого общества. Положение государства в мировой экономике и политике, его экономическая и военно-политическая сила определяются уровнем экономической безопасности. Более того, экономическая безопасность является гарантией независимости и суверенитета государства. Проблема сокращения теневой экономики приобретает существенное значение в качестве серьезной угрозы экономической безопасности. Борьба с теневой экономикой в настоящее время стала крайне необходимой и неотложной, в частности, для Республики Армения.

**Ключевые слова:** *теневая экономика, экономическая безопасность, внутренние угрозы, внешние угрозы, факторы, доклад МВФ.*

JEL: F52, H70, O52

**MARIAM KOTOYAN***PhD Student at the Chair of Economic Theory at ASUE*

***The Shadow Economy as a Threat to Economic Security.*** – Economic security is an integral part of the national security of all countries. Nowadays, economic security has become the basis of socio-economic, political and national stability of society. The state's position in the world economy and politics, its economic and military-political power are determined at the level of economic security. In addition, economic security is a guarantee of the independence and sovereignty of the state. As a serious threat to economic security, the issue of reducing the shadow economy is vital. The fight against the shadow economy has now become an extremely necessary and urgent problem, in particular, for the Republic of Armenia.

**Key words:** *shadow economy, economic security, internal threats, external threats, factors, the IMF report.*

JEL: F52, H70, O52